1874 թուի յունվարի 19-ին Բարձրագոյն հաստատուած կանոններ, որոնք նախապէս հաւանութիւն են գտել Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքայի կողմից

---

1) *Համաձայն օրէնքների ժողովածուի* XI *հատորի,* I *մասի,* 975-*դ յօդուածի, հայ-լուսաւորչական հոգևորականութեան պարտաւորութիւնն է մնում հիմնել և կառավարել եկեղեցական դպրոցներ, նոյնպէս և հոգալ մտցնելու դասատուութեան կանոնաւոր և յարմար եղանակ և պահպանել բարի վարք ուսուցանողների և աշակերտների մէջ։*

2) *Ժողովրդական դպրոցների տեսուչների* (инспекторъ) *վրայ, հայ հոգևորականութեան հիմնելիք և վարելիք ընդհանուր կրթական եկեղեցական-ծխական դպրոցների վերաբերմամբ, պարտաւորութիւն է դրուում, համաձայն* 1873 *թուի նոյեմբերի* 22-*ին Բարձրագոյն հաստատուած Պետական Խորհրդի կարծիքին՝ հսկողութիւն ունենալ,* 1) *որ բոլոր դպրոցներում աւանդուի ռուսաց լեզուն, իսկ այն դպրոցներում, որտեղ աւանդում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, աւանդեն նաև ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն՝ ռուսերէն լեզուով.*

2) *Որ այս դպրոցներում ուսուցանողները լինեն ռուսահպատակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական յատկութիւններ։ Իսկ միջամտել տնտեսական մասի մէջ կամ նրան կենտրոնի ենթարկել՝ տեսուչներին իրաւունք չէ տրուում։*

3) *Այն ուսումնարանները, որոնք նպատակ ունին հոգևորականներ պատրաստել՝ չեն ենթարկուում ժողովրդական ուսումնարանների տեսուչների հսկողութեան և գտնուում են հոգևոր իշխանութեան բացառական վարչութեան տակ։ Այս դպրոցների ուսման դասընթացի և ներքին կարգերի մասին կանոնները պէտք է ներկայացուեն Բարձրագոյն կառավարութեան ի հաստատութիւն։*
(*յօդ.* 1004)